[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
22	Հոկտեմբեր	2019 թ.		Բ	1101610046
[4] Առաքման ամսաթիվ					
22	Հոկտեմբեր	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի			
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3		
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը			
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ		
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834	
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		
[20] Լրացուցիչ տվյալներ			
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը			
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բաժ. հարկ	Այդ թվում՝ ավելաց. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 30102019 բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անուն, ազգանուն)

Ստացող
(անուն, ազգանուն)

22/10/2019 15:43:51

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

« 03 » հոկտեմբերի 2019թ. ք.Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի պետ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Շ.Վ.Իկիլիկյանս, քննարկելով վարույթիս թիվ 30102019 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 06:25-ին, Ախուրյանի շտապբուժօգնության կայանից ոստիկանության Ախուրյանի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Շիրակի մարզի Բասեն գյուղում դանակահարություն է տեղի ունեցել, մեկ անձ վնասվածքներով տեղափոխվել է «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն, իսկ Սուսաննա Գևորգի Կանդալյանի դին հայտնաբերվել է դեպքի վայրում՝ պարանոցի կտրած վերքով:

«Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից նույն օրը՝ ժամը 06:35-ին, ոստիկանության Ախուրյանի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ <<աջ բազկի հետին մակերեսի կտրած-ծակած վերք, ձախ նախաբազկի հետին կողմնային մակերեսի տարածուն լաթավորված վերք՝ խորանիստ հյուսվածքների վնասումով>> ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխվել ՇՄ Բասեն գյուղի բնակիչ՝ Վահագն Նաիրիի Կանդալյանը, ով հաղորդում է տվել, որ 2019 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 05:00-ի սահմաններում, երբ տանը գտնվել է քնած վիճակում, թևի շրջանում զգացել է ցավ, արթնացել ու տեսել է մորեղբորը՝ Ալբերտ Գևորգի Կանդալյանին, դանակը ձեռքին, իսկ իր աջ և ձախ ձեռքերը վնասված, պահանջել է դանակը, դիմադրել, փորձել է խլել, սակայն չի կարողացել, միասին քաշքշվելով գնացել են հարևանությամբ գտնվող՝ Ալբերտ Կանդալյանի բնակարան, որտեղ կարողացել է դանակը ձեռքից վերցնել, օգնություն է խնդրել, որի ժամանակ Ալբերտ Կանդալյանը գնացել է իր տան նկուղ, իսկ անասնագոմի միջնամասում արյունոտված ու ընկած դիրքում տեսել է իր մայրիկին՝ Սուսաննա Կանդալյանին:

Պարզվել է, որ Ալբերտ Գևորգի Կանդալյանը 2019 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 05:00-ի սահմաններում Շիրակի մարզի Բասեն գյուղի 4-րդ փողոցի 1-ին նրբանցք 1-ին փակուղի 47 տան բնակիչներ՝ Սուսաննա Գևորգի Կանդալյանին և նրա որդուն՝ Վահագն Նաիրիի Կանդալյանին ապօրինաբար կյանքից զրկելու՝ սպանելու դիտավորությամբ գնացել է վերը նշված հասցեին կից գտնվող Սուսաննա Կանդալյանին պատկանող անասնագոմ, իր մոտ եղած կենցաղային դանակի գործադրմամբ բազմաթիվ հարվածներ է հասցրել անասունների կիթով զբաղված Սուսաննա Կանդալյանի կրծքավանդակի հետին մակերեսի և պարանոցի առաջային հատվածներին, սպանել նրան, այնուհետև շարունակելով իր հանցավոր մտադրությունը գնացել է Սուսաննա Կանդալյանի տուն, դանակի հարվածներ հասցրել տան նախասրահում քնած վիճակում գտնվող Վահագն Կանդալյանի աջ և ձախ թևերին, պատճառել խորանիստ հյուսվածքների վնասումով կտրած-ծակած վերքեր, սակայն հանդիպելով Վահագն Կանդալյանի դիմադրությանը իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել, ինչից հետո գնացել է իր՝ Շիրակի մարզի Բասեն գյուղի 4-րդ փողոցի 2-րդ տան նկուղ և առաստաղից էլեկտրական լարով կախվելու եղանակով ինքնասպան է եղել:

Դեպքի առթիվ 2019 թվականի մայիսի 24-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնում հարուցվել է թիվ 30102019 քրեական

գործը ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 110-րդ հոդվածի 1-ին մասով, կատարվում է նախաքննություն:

Տուժող՝ Վահագն Նաիրիի Կանդալյանը ցուցմունքով հաստատել է հաղորդմամբ նշված հանգամանքները, հայտնել, որ մորեղբայրը՝ Ալբերտ Կանդալյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, 2019 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 05:30-ի սահմաններում, իրենց տանը մարմնական վնասվածքներ պատճառել է Ալբերտ Կանդալյանը՝ ձեռքին եղած դանակով, երբ ինքը քնած է եղել, արթնանալով դիմադրել է, փորձել է ձեռքին եղած դանակը խլել, սակայն չի կարողացել, քաշքշվելով գնացել են մինչև Ալբերտ Կանդալյանի տան մուտքի դիմաց, օգնություն է խնդրել, որից հետո Ալբերտ Կանդալյանը չկարողանալով կոտրել իր դիմադրությունը թողնելով դանակը իր մոտ մտել է տան նկուղ, իսկ ինքը բուժօգնություն է խնդրել Պողոս Կանդալյանից, որի ընթացքում տեսել է մայրիկին՝ Սուսաննա Կանդլյանին՝ անասնոգոմի միջնամասում արյունոտված, ընկած վիճակում:

Վկա՝ Լենա Հակոբի Կանդալյանը ցուցմունք է տվել, որ 1985 թվականին ամուսնացել է Ալբերտ Կանդալյանի հետ, համատեղ ամուսնական կյանքում ունեցել են երեք երեխաներ՝ Պողոս, Ստելա և Լիլիթ Կանդալյաններին: Պողոս Կանդալյանն ընտանիքով և Ստելա Կանդալյանը բնակվում են համատեղ, իսկ Լիլիթ Կանդալյանն ընտանիքով բնակվում է Հովիտ գյուղում: Ալբերտ Կանդալյանը, ում նաև անվանում են Ջանո, 2009 թվականից գրանցված է Գյումրու հոգեբուժարանում «բելի գարյաչկա» ախտորոշմամբ, որի համար արգելվել է ոգելից խմիչքների օգտագործումը, մոտ 7 տարի վերջինը չի օգտագործել ոգելից խմիչքներ: Ալբերտ Կանդալյանը 2012 թվականին հոգեբուժարանում բուժվելուց հետո, օրեկան երկու անգամ օգտագործել է «տրիվտազին» տեսակի դեղամիջոցը: Նշանակված են եղել նաև «ցիկլադոլ, գալոպերիդոլ» տեսակի դեղամիջոցները, սակայն Ալբերտ չի ցանկացել խմել, պատճառաբանելով, թե ուղեղը ձգվում է, սակայն բժիշկը հորդորել է օգտագործել, որպեսզի մտքերը ցրվի: Ամուսնությունից հետո, 1990 թվականին Ալբերտը մեկնել է արտագնա աշխատանքի, իսկ երբ վերադարձել է, նկատել է, որ նրա մոտ ոգելից խմիչքներ օգտագործելուց հետո մտքեր են առաջանում, թե իբր բարեկամներն իրենց վնաս են տալիս, այդպես կրկնվել է տարիներ շարունակ: Ալբերտը կրկնել է, որ հարազատ քույրը՝ Սուսանը, երեխաներին՝ Պողոսին վնաս կտա, կսպանի, ընտանիքի անդամներին, սակայն ուշադրություն չեն դարձրել Ալբերտի արտահայտություններին: Այդ մասին գիտեցել է նաև Սուսանը, ով բնակվել է իրենց հարևանությամբ: Սուսանի ամուսինը մահացել է ու վերջինը բնակվել է որդու՝ Վահագնի հետ միասին: Ալբերտ եղել է շատ հոգատար հայր, անընդհատ կրկնել է Սուսանի կողմից իր երեխաներին վնաս տալու մտքեր, նույնիսկ հայտնել է, թե իբր Սուսանը վնաս կտա ՌԴ-ում գտնվող Պողոսին, նրան կսպանեն ու դիակը կբերեն: Սկզբնական շրջանում ամուսնու հիվանդությունը թաքուն է պահել, իսկ հետագայում երբ խորացել է, 2009 թվականից կոնսուլտացիոն կարգով ամուսնուն գրանցել են հոգեբուժարանում: Սկզբից Ալբերտի բժիշկը եղել է Շառիմանյանը, ստացիոնար բուժում ստացել է Մխիթարյանի մոտ, իսկ վերջերս բժիշկը եղել է Զախոյանը: Հոգեբուժարանում գրանցվելուց հետո, բժիշկների խորհուրդով Ալբերտ մոտ 7 տարի ընդհանրապես ոգելից խմիչքներ չի օգտագործել, իսկ վերջին 3 տարիներին սկսել է խմել, նույնիսկ ծխել շատ քանակի, խմելուց նրա մոտ «բելի գարյաչկա» է սկսվել ու անընդհատ կրկնել է, որ քույրը՝ Սուսանը, երեխաներին վնաս կտա կսպանի Պողոսին: Սակայն Սուսանի հետ հարաբերությունները եղել են նորմալ, նույնիսկ օգնել է նրան գյուղական բոլոր աշխատանքներում, բայց միշտ տանջել է մի միտք, որ Սուսանը երեխաներին վնաս կտա, այդ մտքերը արտահայտել է Սուսանի ներկայությամբ, սակայն երբևէ նրա հետ չի վիճաբանել: Վերջին ամիսներին հաճախ է օգտագործել ոգելից խմիչքներ, նույնիսկ իր հորդորներին, որ խմիչքներ չխմի, չի լսել, հարազատ, բարեկամներին զգուշացրել է, որ Ալբերտին երբևէ օղի կամ ոգելից խմիչքներ չիյուրասիրեն, Ալբերտը նույնիսկ կենդանի չի մորթել, իսկ այդպիսի ժամանակ հեռու է գնացել՝ չտեսնելու համար:

Յուրաքանչյուր ամսվա 15-ին գնացել է Ախուրյանի բժիշկ՝ Չախոյանի մոտ, ներկայացրել է Ալբերտի վիճակը, ստացել նրան հասանելիք դեղամիջոցները, Ալբերտը չի գնացել, խուսափել է բժիշկի ներկայանալուց: Վերջին անգամ՝ 2019 թվականի մայիսի 14-ին գնացել է բժիշկի, ներկայացրել Ալբերտի վիճակը՝ նշել, որ էլի վատ մտքեր ունի, բժիշկի հարցին պատասխանել է, որ Ալբերտը նորից շարունակում է ոգելից խմիչքներ օգտագործել, իսկ բժիշկը պատասխանել է, որ չպետք է խմի, նույնիսկ տուն վերադառնալուց հետո իր միջամտությամբ Ալբերտը խոսել է բժիշկի հետ, տվել համաձայնություն, որ այլևս չի խմելու: Ինքն անձամբ է հետևել, որ Ալբերտն օգտագործի նշանակված դեղամիջոցները, իսկ «գալոպերիդոլ» տեսակի դեղամիջոցը լուծել է սուրճի մեջ և տվել Ալբերտին, քանի որ նա չի ցանկացել այն խմել: 2019 թվականի մարտի 7-ին որդին՝ Պողոսը, մեկնել է ՌԴ՝ արտագնա աշխատանքի, Ալբերտը սկսել է մտքեր արտահայտել, որ Պողոսին այնտեղ կվերացնեն, ու դա անելու է Սուսանը, նույնիսկ այդ մտքերը սկսել է արտահայտել առանց ոգելից խմիչք օգտագործած՝ սթափ վիճակում, սակայն իրենք ուշադրություն չեն դարձրել Ալբերտի արտահայտած մտքերին: Ժամանակավորապես աշխատանք չլինելու պատճառով, 2019 թվականի մայիսի 23-ին Պողոսը վերադարձել է Հայաստան, նույն օրը երեկոյան ընտանիքով հավաքվել են տանը, ներկա են գտնվել աղջիկը, սկեսուրը, Արսենը, նրա կինը՝ Ժաննան, Վահագնը: Պողոսն առաջարկել է օղի բերել ու խմել, սակայն ինքը պատասխանել է, որ չկա, քանի որ չեն ցանկացել, որպեսզի Ալբերտը օղի խմի: Ժամը 23-ի սահմաններում Ալբերտը խմել է դեղերը և քնել, սակայն անհանգիստ չի եղել, նույնիսկ հաճախ կրկնող մտքերը չի արտահայտել, մեկ անգամ արթանցել, ծխախոտ է ծխել ու նորից քնել են: Մայիսի 24-ին՝ առավոտյան ժամը 05:30-ին, զարթուցիչի ազդանշանից ամուսիններով արթնացել ու գնացել իրենց անասնագոմ, կովերից մեկին Ալբերտի օգնությամբ կթել է, որից հետո Ալբերտ գնացել է անասնագոմից, իսկ ինքը շարունակել է կթել մյուս երեք կովերին: Մտածել է, որ Ալբերտը գնացել է տուն սրճելու, քանի որ սովորության համաձայն միշտ այդպես է եղել, դրանից հետո վերադառնալու էր անասնագոմ ոչխարներին դուրս հանելու համար: Կովերին կթելուց հետո, երբ կաթը ձեռքին վերադարձել է տուն, տեսել է իրենց տան մուտքի դիմաց Սուսանի որդուն՝ Վահագնին, ձեռքը հագուստով կապված ու ամբողջությամբ արյունոտված, ով գառացել է «Ջանո քեռուն գտեք», իր հարցին պատասխանել է, որ իրեն մարմնական վնասվածք պատճառել է Ալբերտը, իսկ Սուսանը գտնվում է անասնագոմում: Իմանալով, որ Վահագնին Ալբերտը վնաս է տվել, մտածել է, որ Սուսանին էլ վնասած կլինի, գոռալով, վազելով գնացել է Սուսանի անասնագոմ, իր ձայնից անասնագոմ են եկել նաև հարևաններ Գայանը, Արուսյակը, Վահրամը, տեսել են Սուսանին գետնին ընկած, բերանն ու պարանոցն արյունոտված, անշարժ վիճակում, հասկացել է, որ մահացած է և նրան ևս Ալբերտն է վնասել՝ սպանել: Սուսանի վրա ջուր են լցրել, մտածելով, որ կարող է ինչ-որ բանով օգնած լինեն, գրկելով նրան դուրս են բերել անասնագոմից, դրել մուտքի դիմաց, հավաքվել են մարդիկ, ահազանգել շտապօգնություն: Ինքը գնացել է Սուսանի տուն, օգնել Վահագնին, որ հագուստներ հագնի, եկել է Պողոսը, ով Սասունի մեքենայով Վահագնին տեղափոխել են հիվանդանոց, իսկ ինքը գնացել է տուն: Այնուհետև եկել են ոստիկաններ, հետագայում խոսակցություններից իմացել է, որ Ալբերը նկուղում կախվելու միջոցով ինքնասպան է եղել: Դեպքին նախորդող ժամանակ Ալբերտը նախկինում Սուսանի վերաբերյալ կրկնող վատ մտքերը չի արտահայտել, իրեն տարօրինակ չի պահել, Սուսանին անասնագոմում սպանելուց հետո վնասել է Վահագնին, այնուհետև իրենց տան նկուղում կախվելու միջոցով ինքնասպան է եղել:

Վկա՝ Օհաննա Արարատի Ստամբոլցյանը ցուցմունք է տվել, որ անձնագրով ազգանունը Ստամբոլցյան է, սակայն օրիորդական ազգանունը Չախոյան է և իրեն բոլորը Չախոյան ազգանվամբ են դիմում: Աշխատում է «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում որպես բժիշկ հոգեբույժ: Շիրակի մարզի Բասեն գյուղի բնակիչ՝ Ալբերտ Գևորգի Կանդալ-

յանին ճանաչել է որպես Ախուրյանի բժշկական կենտրոնի հոգեբուժական կաբինետում գրանցված հիվանդ, ով տառապել է «Շիզոֆրենիա պարանոիդ ձև, ցնորազառանցանքային համախտանիշ» հիվանդությամբ: Ախուրյանի բժշկական կենտրոնում Ալբերտ Կանդալյանի նկատմամբ հսկողությունը իրականացվել է 27.06.2009 թվականից և այն շարունակվել մինչև 11.05.2019 թվականը: Հսկողության ողջ ժամանակահատվածը իրականացվել է իր կողմից, Ալբերտ Կանդալյանը ունեցել է հետապնդման վերաբերման, տեսողական, լսողական զառանցական մտքեր, 2009 թվականին ստացիոնար բուժում է ստացել Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, որից հետո մշտապես ստացել է պահպանողական ամբուլատոր բուժում, ստացել է տրիֆթազին, հալոպերիդոլ, ցիկլոդոլ, լորազեպամ կամ դիազեպամ տեսակի դեղահաբեր, բուժման ֆոնի վրա եղել է հանգիստ, պրոդուկտիվ պսիխոպաթոլոգիա չի հայտնաբերվել, հիվանդությունը գտնվել է կոնպենսացիայի փուլում: Ալբերտ Կանդալյանը եղել է հանգիստ, իսկ եթե որոշակի ակտիվություն է նկատվել, ապա ժամանակին իր հսկողության ներքո դեղորայքի միջոցով հիվանդի մոտ ակտիվ փսիխոպաթոլոգիան հետ է զարգացել: Ալբերտ Կանդալյանը կնոջ՝ Լենա Կանդալյանի հետ է մշտապես ներկայացել Ախուրյանի բժշկական կենտրոն, սակայն ամբուլատոր քարտում իր կողմից նշվել է, որ մշտապես ներկայացել են հարազատները կամ կինը, այդպես է նշվել, քանի որ Ալբերտ Կանդալյանը դեղորայք ստանալու համար լիազորել է կնոջը և տղային: Ալբերտ Կանդալյանը գանգատվել է անքնությունից, նշել է, որ երբեմն ձայներ է լսում գլխի միջից, սակայն դրանց ուշադրություն չի դարձնում, քանի որ սովորել է այդ ձայներին, իսկ դեղորայքն ընդունելուց հետո այդ ձայները անհետացել են: Ալբերտ Կանդալյանը մշտապես եղել է հանգիստ հիվանդ, ստացիոնար բուժման կարիք չի ունեցել, երբևէ նրա կողմից մարդկանց կամ ինքն իրեն վնասելու դրսևորումներ չի նկատվել, եթե նկատվեր, ապա անպայման իր կողմից կուղեգրվեր համապատասխան կենտրոնում ստացիոնար բուժման, իսկ հարազատները նրա վիճակի մասին պետք է գրավոր տեղեկացնեին՝ համապատասխան բուժումը կազմակերպելու համար: Ելնելով Ալբերտ Կանդալյանի ախտորոշումից, կարող է ասել, որ զառանցական մտքերը, ինքնասպանություն գործելու և այլ անձանց վնաս տալու վարքագիծը անսպասելիորեն կարող է ի հայտ գալ հիվանդի մոտ: Տնայցեր չի կազմակերպել, պարբերաբար զանգահարել եմ Ալբերտ Կանդալյանի կնոջ՝ Լենա Կանդալյանի հեռախոսահամարին, հեռախոսային խոսակցության ժամանակ հայտնել է, որ վերջինս չպետք օրի օգտագործի, իսկ նշանակված դեղահաբերը պետք է ճիշտ ժամանակին օգտագործի: Վերջին անգամ Ալբերտ Կանդալյանին տեսել է 2019 թվականի ապրիլի 16-ին, դրանից հետո նրան հրավիրել է իր մոտ, սակայն անհայտ պատճառով վերջին անգամ Ալբերտը կնոջ հետ չի եկել և նրա կնոջը զգուշացրել է, որ հաջորդ այցին Ալբերտի հետ ներկայանա: Հիվանդի մոտ փոփոխություններ չի նկատվել, հարազատները նույնպես ներկայացրել են հանգիստ վիճակ, այդ իսկ պատճառով դեղահաբերի փոփոխություն չի եղել: Դեպքից մի քանի օր անց է իմացել, որ Ալբերտը սպանել է քրոջը, մարմնական վնասվածքներ պատճառել վերջինիս որդուն, իսկ դրանից հետո ինքնասպան է եղել:

«Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից ստացված թիվ 135 գրության համաձայն՝ Ալբերտ Գևորգի Կանդալյանը /ծնված՝ 11.08.1960թ., հաշվառված և բնակվել է Շիրակի մարզի Բասեն գյուղի 4-րդ փողոցի 2-րդ տանը/ 2009 թվականից հաշվառված է եղել «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժանարկոլոգիական կաբինետում «շիզոֆրենիա՝ հալյուցինար պարանոիդ ձև» ախտորոշմամբ և ստացել է հոգեմետ դեղորայքներ:

«Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից առգրավել է Ալբերտ Կանդալյանի վերաբերյալ լրացված թիվ 498 ամբուլատոր քարտում առկա տվյալների համաձայն՝ Ալբերտ Կանդալյանը 2009 թվականի հունիսի 27-ից հաշվառված լինելով «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանհոգեբուժական կաբինետում, բժիշկի կողմից դեղորայքի նշանա-

կումներ կատարվել են 2013 թվականի հուլիսի 30-ից և շարունակվել մինչև 2019 թվականի մայիսի 11-ը: Նշված ժամանակահատվածում յուրաքանչյուր ամիս բժիշկի կողմից նշանակվել են հետևյալ դեղամիջոցները՝ «հալոպերիդոլ, ցիկլոդոլ, լորազեպամ կամ դիազեպամ և տրիֆ-տազին»:

Ըստ առկա գրառումների՝ մեծամասամբ բժիշկին ներկայացել է կա՛մ հիվանդի հարազատը կա՛մ կինը, որի արդյունքում կատարվել է վերը նշված դեղատեսակների նշանակումները:

2019 թվականի հուլիսի 30-ին գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն, որով խնդրվել է հանձնարարել համապատասխան աշխատակիցներին և ի թիվս այլ հարցերի պատասխանել նաև այն հարցին, թե Ալբերտ Կանդալյանը 2009 թվականի հունիսի 19-ից՝ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժական ծառայությունում 10 օր ժամանակով ստացիոնար բուժում ստանալուց հետո, մինչև 2019 թվականի մայիսի 24-ն ընկած ժամանակահատվածում, ելնելով իր հիվանդության բնույթից, ընթացքի դինամիկայից, ենթակա չէ՞ր արդյոք ստացիոնար բուժման, եթե այո, ապա նույն բուժհաստատությունու՞մ, թե՝ մեկ այլ, ինչպես նաև ենթակա չէ՞ր արդյոք նշանակված դեղամիջոցների փոփոխման՝ թե՛ տեսակով, թե՛ չափաքանակով:

2019 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ Առողջապահության նախարարությունից թիվ ԱԱ/02.1/15856-19 գրությամբ ստացվել է առողջպահության նախարարության հոգեբուժության և բժշկական հոգեբանության գծով խորհրդատու Լուսինե Անդրանիկի Արզումանյանի գրությունը, համաձայն որի՝ Ալբերտ Կանդալյանի ստացած դեղամիջոցների տեսակի և քանակի, ստացիոնար բուժման ենթակա լինելու հանգամանքը կարող է պարզաբանվել միայն դատահոգեբուժական փորձաքննությամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Թիվ 30102019 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին:

2. Հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի նախագահին՝ փորձաքննության կատարումը հանձնարարված փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

3.Փորձագետին տրամադրել քրեական գործի նյութերը և Ալբերտ Կանդալյանի վերաբերյալ լրացված բժշկական փաստաթղթերը:

4.Պարզաբանման համար համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

- Ալբերտ Կանդալյանի նկատմամբ «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժի կողմից պատշաճ հոսկողություն և բուժում իրականացվել է, թե ոչ,
- Ալբերտ Կանդալյանը 2009 թվականի հունիսի 19-ից՝ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժական ծառայությունում 10 օր ժամանակով ստացիոնար բուժում ստանալուց հետո, մինչև 2019 թվականի մայիսի 24-ն ընկած ժամանակահատվածում, ելնելով իր հիվանդության բնույթից, ընթացքի դինամիկայից, ենթակա չէ՞ր արդյոք

ստացիոնար բուժման, եթե այո, ապա նույն բուժհաստատությունու՞մ, թե՝ մեկ այլ, ինչպես նաև ենթակա չէ՞ր արդյոք նշանակված դեղամիջոցների փոփոխման՝ թե՛ տեսակով, թե՛ չափաքանակով:

5. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետի իրավասության մեջ ու դրանց պատասխանը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

Ախուրյանի քննչական բաժնի պետ,
արդարադատության երրորդ դասի
խորհրդական՝ Շ.Վ.ԻԿԻԼԻԿՅԱՆ